<<19>> մայիսի 2020թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն Մաթևոսյան

Տեղեկացվում է Ձեզ, որ <<Արմավիրի N8 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը 2020 թվականի մայիսի 19-ին կայացրել է որոշում տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու մասին:

Մրցույթը կկայանա 2020 թվականի հուլիսի 13–ին ժամը 13^{00}-ին:

Կից ներկայացվում են քաղվածք կառավարման խորհրդի նիստի N9 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 2 թերթ:

<<Արմավիրի N8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի
կառավարման խորհրդի նախագահ՝ ***Լ. Հարությունյան***

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11-02465-2020
19 05 2020 թ.

Քաղվածք

<<ԱՐՄԱՎԻՐԻ N8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆԿԱՅԱՑԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ N9 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ԼՍԵՑԻՆ.

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ <<Արմավիրի N8 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. ՀՀ Արմավիրի մարզի <<Արմավիրի N8 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համար անցկացնել մրցույթ:
   Մրցույթը նշանակել 2020թ. հուլիսի 13-ին ժամը 13^{00}-ին:
2. Խորհրդի նշված որոշումը սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին:

<<Արմավիրի N8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ՝ ***Լ. Հարությունյան***

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի <<Արմավիրի N8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. բարձրագույն կրթությունը,
3. ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),
5. հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
6. աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

<u>Փաստաթղթերն ընդունվում են 2020 թվականի հունիսի 3-ից մինչև հուլիսի 2-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 14^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից, <<Արմավիրի N8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում:</u>

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

<u>Մրցույթը տեղի կունենա 2020 թվականի հուլիսի 13-ին, ժամը 13^{00}-ին՝ <<Արմավիրի N8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում:</u>

Հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 182:

Տեղեկությունների համար զանգահարել 093578667 հեռախոսահամարով:

ՀՀ Արմավիրի մարզի
<<Արմավիրի N8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի
կառավարման խորհուրդ